

**ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ ՆՎԻՐՎԱԾ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ  
ՄԱՀՎԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ**

1998 թ. ապրիլի 14-ին Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում տեղի ունեցան գիտական ընթերցումներ՝ նվիրված խաչատուր Արուվյանի մահվան 150-ամյակին. ընթերցումները կազմակերպվել էին Արուվյանի տուն-թանգարանի հետ համատեղ:

Բացման խոսք ասաց ակադեմիկոս էզվարդ Ջրբաշյանը. նա մասնավորապես նշեց, որ մեզանից ամեն մեկը, խորանալով Արուվյանի մահվան տարբեր վարկածների մեջ, կարող է նախապատվություն տալ զրանցից մեկին կամ մյուսին: Բայց վերջնական, անառարկելի կզրահանգման պալ չնսրավոր չէ և կրեի պետք էլ չէ, որովհետև Արուվյանի անհայտացման խորհրդավոր պատճառները նաև մի խորիմաստ լեզունգ է, որի մեջ իր խտացած արտահայտությունները գաղթ նրա կարճատև, հերոսական և ողբերգական մտքաբեկումներով լեցուն կյանքի հանրագումարը: 1948 թ. ապրիլի 2-ին (14-ին) Արուվյանը զնաց զեպի անմահություն, հավերժորեն միաձուլվեց իր ժողովրդին և հայրենի բնությանը: Ինքնավ շայաստանի, նրա պատմության և ներկայի. նրա մշակույթի հավերժական խորհրդանիշներից մեկը, Արուվյանի մեծությունը ոչ միայն նրա բուն ստեղծագործության մեջ է, այլև նրանում, որ նա բացեց մի ամբողջ դարաշրջան՝ գոհնալով հայ նոր գրականության հիմնադիրը, հայ հասարակական մտքի ունիթրան, վերջապես մի լուսաստղ, որ ահա մեկ ու կես դար լուսավորում է հայ գրողների ծանապարհը:

Էդ. Ջրբաշյանը համառոտակի ներկայացրեց նաև այն հիմնական նվաճումները, որ ձևոր է բերել արուվյանագիտությունը՝ իր գոյության տասնամյակների ընթացքում: Մասնավորապես նշվեց, որ Արուվյանի կյանքի և գործի ուսումնասիրությունը մշտապես եղել է գրականության ինստիտուտի առաջատար թեմաներից մեկը: Այդ թեմայով պաղվել են գիտնականների մի քանի սերունդ: Առանձնապես կարևորվեց բազմալաստակ ժողանգ Շահադիդի աշխատանքը, որի արգասիքը «Դիվան խաչատուր Արուվյանի» և «Խաչատուր Արուվյանի կենսագրությունը» մեծարժեք գրքերն են: Հիշատակվեցին նաև ակունավոր գրականագետներ Խուրեն Զարյանի, Արամ Վանալանյանի, Հրայր Մուրադյանի և այլոց գործերը: Այդ շարքում առանձնացվեց հատկապես պրոֆ. Պիոն Հակոբյանի բազմամյա արդյունավետ աշխատանքը, որի բաղմաթիվ գրքերում և հոդվածներում նորովի լուսարանվեցին արուվյանագիտության շատ խնդիրներ, գիտական շրջանառության մեջ գրվեցին հարյուրավոր նորահայտ փաստեր: Իրեն ասվածի հաստատում՝ հիշվեց գիտնականի խաչատուր Արուվյանի կենսագրության առեղծվածները մենագրությունը, որ լույս տեսավ մի քանի ամիս առաջ: Տպագրության է պատրաստվում նաև Պ. Հակոբյանի մեկ այլ աշխատություն՝ Արուվյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը, որ կլինի արուվյանագիտության բոլոր ձևերերումների հանրագումարը:

Այս ամենից բացի, 1940—50-ական թթ. ինստիտուտում իրականացվել է Արուվյանի երկերի լիակատար ժողովածուի 10-հատրյակի հրատարակությունը, որ մեր գրականության ու մշակույթի անվիճելի կոթողներից է և անփոխարինելի տեղ է գրավում հայ դասական գրականության գիտական հրատարակությունների շարքում:

Հիշատակվեց նաև 1984 թ. աշնանը ինստիտուտում կազմակերպված համամիութենական գիտաժողովը՝ նվիրված Արուվյանի ծննդյան 175-ամյակին: Լավագուն նյութերը հրապարակվեցին ուսերեն մեծագիր ժողովածուով:

Վաստակաշատ արուվյանագետ Պ. Հակոբյանի ղեկուցումը՝ «Արուվյանի վախճանն ու վերադարձը (1948—1958)», նվիրված էր մեծ լուսավորչի անհայտացման հին ու նոր վարկածների քննությանը և նրա գործի վերածննդին: Համառոտակի ներկայացնելով ճակատագրական ապրիլի 2-ին նախորդող մի քանի օրերի իրագրությունը՝ ղեկուցողը հիշեցրեց, որ Արուվյանը մարտի 30-ից մինչև ապրիլի 1-ը գրաղված է եղել իր տեսական գործերը հանձնելով, որը զեռ չէր ավարտել: Երբ նկատում են նրա բացակայությունը և սկսում որոնումները, ծագում են մեկը մյուսին հաջորդող վարկածներ, որոնցից շատերը բանահյուսական բնույթ ունեն և

գոյատևում են արդեն մեկ ու կես դար՝ առանց ստուգապատում եզրահանգման: Իսկ գեկուցողը համարեց մեր պատմության ամենատխուր էջերից մեկը:

Այնուհետև շարադրվեցին հանրահայտ ու համեմատարար ընդ ծանոթ մի քանի վարկածներ, ինչպես՝ թե նրան ցարական իշխանությունները զաղտնի տարել են, թե, իբր, տեսել են Ակոռիում՝ մի քարի նստած լաց լինելիս, շուկայում ման գալիս, Գյանջալում աղբատի շորերով շրջելիս և այլն: Զեկուցողը ցույց տվեց, որ այդ վարկածներից ոչ մեկը իրական հիմք չունի: Նա միաժամանակ ընդգծեց, որ այդ պահին Արուսյանի անհայտանալը կամ պարզապես նրա ոչնչացումը գրեթե անխուսափելի էր դարձել: Բերեց այս ենթադրության հավանականությունը հաստատող երեք փաստարկ: Առաջին՝ երևանարենակ Մահմադ Շաֆի ընկեր, ում ընտանիքի հետ Արուսյանը մոտ հարարերությունների մեջ էր, զգալի գումար էր պարտք նրան, որ ժամանակին վերցրել էին՝ այդ ընտանիքի ինչ-ինչ կապալառուական գործեր կարգավորելու համար: Իրիֆլիս մեկնելու նախօրյակին Արուսյանը պահանջում է վճարել պարտքը, իսկ Շաֆի գերդաստանը այլևս ի վիճակի չէր այդ գումարը վերագրանելու: Սենում էր պարտքից ազատվել՝ պարտատիրոջը մեղադրեց վերացնելով: Հոգուտ այսպիսի ենթադրության դեկուցողը ուշադրություն հրավիրեց երկու լրացուցիչ հանգամանքի վրա. մեկ՝ որ պարաատիրոջ անհայտանալուց հետո Շաֆի ընկեր հայտարարում է, թե ինքը վճարել է իր պարտքը, և այսպե՝ որ նա դրանից հետո ամեն կերպ ձգտում էր Նրևանից հեռանալ: Նրկորդ՝ Նրևանում ծառայելու տարիներին Արուսյանի երգվալ հակառակորդն է եղել փոստապետ Արտեմ Քալանթարյանը: Նրա հետ 1847 թ. նոյեմբերի 18-ին Արուսյանը մեծ գումարով զրազ էր եկել, որ նորից կրթադրանա Արարատի զազաթը: Գրազը օրինականորեն վավերացված էր: Քալանթարյանը չուտով համոզվում է, որ դիմացինը իրական հնարավորություն ունի զրազը շահելու: Նվաճա նյութական մեծ կորստի հեռանկարը, ինչպես ենթադրեց զեկուցողը, կարող էր հարկտվել Քալանթարյանին՝ միանալ այն ուժերին, որոնք շահագրգռված էին իր զրազնեկերոջ ֆիզիկական ոչնչացմամբ: Նրկորդ՝ Արուսյանը լրջորեն ծրագրում էր Նրևանի նահանգի բոլոր զարոցներում մտցնել ռուսաց լեզվի պարտադիր ուսուցում՝ այդ զարոցները ենթարկելով ռուսական իշխանության իրավասու մարմիններին: Իսկ չարժում է մահմեդական մուլեռանը հոգեորականության դալույթը: Այս հանգամանքը ևս հավանական էր դարձնում հանդուգն տեսլի նկատմամբ ֆիզիկական հաշվահարգարը:

Արուսյանի նամակներից քաղված վկայակոչումներով զեկուցողն արեց այն ենթադրություններ, թե այդ օրերի նրա մոայլ տրամադրությունը հավանաբար պայմանավորված է եղել նաև այդ եռակի վտանգի նախազգացումով:

Արուսյանի «վերադարձին», այսինքն՝ նրա լուսավորական մեծ գործի, նրա ստեղծագործության հավերժական կյանքի սկիզբը, ինչպես նշվեց զեկուցման մեջ, կապված է մի մարդու անվան հետ, որի անփոխարինելի ծառայությունը մեր դրականության, մշակութի պատմությանը դեռևս ըստ արժանություն չի գնահատվել: Իսկ բանասեր և իրավագետ Հովսեփ Փոնոգյանն է, որի ջանքերով էլ մեծ լուսավորչի անհայտացումից մի ամբողջ տասնամյակ հետո միայն բացվում է նրա վիթխարի գործի խորհուրդն ու խորքը՝ սկսած «Վերք Հայաստանի»-ից մինչև «Պարապ վախտի խաղալիք»:

Ակադեմիկոս Ս. Սարինյանի զեկուցումը նվիրված էր «Վերք Հայաստանի» վեպի կառուցվածքի քննությանը: Հարցի զրվածքը և՛ դրական-պատմական, և՛ տեսական ուղղվածություն ուներ:

Վերջին տարիների դրականագիտական որոնումների մեջ զեկուցողն առանձնացրեց մի տարածվող մտայնություն. իբր, նարեկացուց հետո հայ զեղարվեստական միտքը արեմտյան մշակութային դաշտի իր բնականոն տարածքից շեղվել է զեպի արեելականություն: Այս մտայնությունը բացասման դիտակետից էլ փորձ արվեց տեսականորեն վերաիմաստավորել Արուսյանի վեպի կառուցվածքը:

Անդրադառնալով հարցադրման պատմությանը՝ զեկուցողն ընդգծեց, որ «Վերք Հայաստանի» վեպի կառուցվածքը, առհասարակ նրա ժանրային ու մշակութային տիպը հետաքրքրություն առարկա է դարձել հրատարակման իսկ օրից: Խնդրի շուրջ առաջինն արտահայտվել է Ստ. Ոսկանը՝ անցկացնելով այն միտքը, թե Արուսյանի վեպն առհասարակ է մեկնարանել ու գնահատել արեմտյան վեպի շախմատներով: Այստեղից է, ըստ զեկուցողի, սկիզբ առնում այն համոզմունքը, թե «Վերք Հայաստանի» վերաբերում է առավելապես արեելյան մշակութային տիպին: Այդ մտքի ինկրցիան ձգվում է մինչև մեր ժամանակները: Իբրև բնորոշ օրինակ հիշատակվեց Կ. Դեմիրճյանի կարծիքը, ուր խոսելով եվրոպական վեպի պարզացման



ուղիներին, մասնավորապես Արուսյանի վեպի մշակութաբանական տիպի մասին, նա եզրակացնում է, թե վերջինս անհամառոտ է և Բեմիրճյանի համոզմունքով՝ «Վերը Հայաստանին» աշուղական վեպ է, Արուսյանը ոչ թե վիպասան է՝ եվրոպական իմաստով, այլ ասացող է, իսկ նրա վեպը հիշեցնում է արեւելյան սիրավեպերը, ավելի որոշակի՝ արեւելյան վիպասանություն է՝ եվրոպական ուժանի տարրերով:

Վիճարկելով այս տեսակետը՝ զեկուցողը հակասություն է նկատում նաև Արուսյանի իսկ կողմից սեփական երկի գիտական և ենթագիտական ընկալումների միջև: Այսինքն՝ գիտական տոմարանությամբ Արուսյանն իր վեպը համարում է «հորինված և կառուցված ժողովրդական ըմբռնումներին և զգացմունքներին համապատասխան», հետո «եվրոպական ճառակից ու ոճից» Բայց, ինչպես ընդգծվում էր զեկուցման մեջ, ստեղծագործական ենթագիտակցությունը նրան հուշում է Լապկա Եվրոպական մտածողություն՝ վեպից դուրս զգել թող մտացածրներ, արհեստական և անբնական, այսինքն այն, ինչ արեւելյան է:

Ամենից ավելի ճշմարտամոտ համարվեց Միքայել Նալբանդյանի կարծիքը, որի համաձայն Արուսյանի վեպը արտաբնական արեւելյան է, բայց «խորհրդով», խորհրդանշանական կառուցվածքով՝ արեւմտյան:

Այս համոզող պատմական ակնարկից հետո Ս. Սարինյանը շարադրեց իր տեսական պատկերացումները «Վերը Հայաստանին» վեպի կառուցվածքի մասին՝ իմացաբանական ելակետ ընդունելով Կառլ Յունգի այն գիտությունը, թե՛ «ստեղծելով բանականությունը» (intellektuelle Schöpfung) կոսմոկրակն զորոճն է, կյանքի իսկական, բուն էությունը այն զեպրում, երբ արեւմտությունը մեկը հաղթի սկսել են հասկանալ, որ այն հանդիսանում է իմացության Լական պայման, ուստի և աշխարհի գիտակցական գոյությունը: Այս մեկնակետից դիտված՝ Արուսյանի վեպը, ինչպես ընդգծեց զեկուցողը, ձրագրված, բանականությամբ կարգավորված ստեղծագործություն է, այսինքն՝ առաջարկում շարադրված ձրագրին է, որ իրականացվում է վեպի խորհրդանշական կառուցվածքով: Վերջինս էլ հենց վեպի «խորհուրդ» է, որով այն լիապես մեկնել է զանոմ Եվրոպական մշակութային ըստի որեններով: Վեպի հաղորդի կառուցվածքը խորհրդանշում է զրույթ—հակազույթ—համազույթ եռամիասնությունը: Առաջին զույթը՝ զրույթը, պանծացվող Հայաստանն է, նահապետական աշխարհի բանահյուսությունը, բուն հայ աշխարհը: Ֆոնաշների երեւումով սկսվում է հակազույթը՝ հակաաշխարհը, այդ խորհրդի խորը զգալիություն է Սրեանի բերդի, պարսկական բնությունների նկարագրություններով: Սրբորդ գլուխը համազույթն է՝ լուծմունքը, այսինքն Հայաստանի ազատագրումը, նոր հույսերի, ակնկալիքների հետապնդերը: Իսկ «Ձախի» համակցվածը այդ նոր Հայաստանի զովեղն է:

Ձեկուցողն անդրադարձավ Կառլ Ֆրայդային շեղումներին, որոնք, թվում է, շեն կապվում վեպի կառուցվածքի հետ, բայց գիտակցությունը դիտված՝ զրանք այդ կառուցվածքի արամբ բանությունը հյուսվում են ստեղծագործության խորհրդին:

Հիմնական Եվրոպականությունն այն էր, թե «Վերը Հայաստանին» ինտելեկտուալ վեպ է, այսինքն՝ նրա ժանրային ու մշակութաբանական բնույթը որոշվում է արեւմտյան վեպի տիպաբանությամբ:

Խ. Արուսյանի տուն-թանգարանի աշխատակից Մ. Գալոյանի զեկուցումը նվիրված էր Արուսյան զրդի և զործի, Արուսյան անհատի կերպարի, առհասարակ Արուսյան հրեւոյթի արտացոլմանը հայ թատրոնում, կինոյում, հրաժշտության մեջ, կնոպարվեւում:

Ձեկուցողը նախ խոսեց Արուսյանի թատերական ժառանգության մասին, ընդգծեց, որ «հայ թատրոնը շատ քիչ զեպերում է անդադարձել» այդ ժառանգության մեկնաբանությունը: Այնուամենայնիվ հետաքրքիր տեղեկություններ հաղորդվեցին Արուսյանի թատերգությունների բեմականացման պատմությունից, որոնք օգտակար կարող են յինել մեծ լուսավորչի կյանքն ու զործը ուսումնասիրողներին համար:

Ձեկուցողի հավաստմամբ՝ «բեմական երջանիկ հակառակը» են ունեցել հատկապես «Վերը Հայաստանին» վեպի թեմաներով ստեղծված պիեսները: Դրանց մեջ առանձնանում են մասնավորապես Պեոճ Պոչյանինը՝ «Աղստի» խորագրով, որ բեմադրվել է 1861-ին, Բիֆիսում և Ա. Սարգսյան-Արեւշտյանինը՝ «Ալան-Բալասի կամ Սրեանի նվաճումը» վերտառությամբ, որ Երկարատե բեմական կյանք է ունեցել՝ շնորհիվ Աղստե կերպարի արեւյանական փայլուն մարմնավորման:

Խոսվեց նաև մեծ լուսավորչի կերպարի մարմնավորման կինեմատոգրաֆիական փորձերի մասին: Հիշատակվեց մասնավորապես «Հյուսիսային ծիածանը», ինչպես նաև մի կարճատև տ.

րած վավերագրական կինոնկար (սցենարը՝ Վ. Բալայանի, ռեժիսոր՝ Ա. Առաքելյան), որ պահվում է Արուսյանի տուն-թանգարանում:

Համառոտակի ընտրված չէին նաև արուսյանական տեքստերով զրկված կամ նրա հիշատակին ձուլված երգերը. որոնց շարքում առանձնացվեց Արամ Մերանգուլյանի «Խաչատուր Արուսյան» հայտնի երգը. որ մինչև այժմ էլ սիրված ու տարածված է ժողովրդի մեջ:

Մ. Գալոյանի գեղարվեստական մի զգալի մասը նվիրված էր կերպարվեստում արուսյանական թեմաների արծարծումներին: Կերպարվեստի զործիչները Արուսյանի կերպարին անդրադարձել են դեռևս նրա կենդանության օրոք: Առաջին փորձը ղեկավարեց Նկարիչ Լյուդվիգ Ֆոն Մայդելի ստեղծած դիմանկարն է, որ կատարվել է 1930 թ. և ըստ էության միակն է: Ընդգծվեց հատկապես արուսյանադեմ Պ. Հակոբյանի դերը, որ վերջնականապես ապացուցել է դիմանկարի իսկությունը: Զեկուցողը համառոտակի կանգ առավ նաև Գ. Բաշինջազյանի «Արուսյանի տունը Փանաբեում» (1911—12 թթ.), Մ. Արեգյանի «Արուսյանը ղուղագիտների միջավայրում», Լ. Զարդարյանի «Նախաշավիղս նկարների, ինչպես նաև 1941 թ. Մ. Սարյանի ստեղծած երկու դիմանկարների վրա: Նշվեց, որ արվեստի այս դորձերը՝ Արուսյանի կյանքի և ստեղծագործության յուրօրինակ մեկնարանություններով, ընդարձակում են արուսյանագիտության հորիզոնները:

Արուսյանի կերպարը մարմնավորող բանդակագործական աշխատանքներից հիշատակվեցին Սուրեն Ստեփանյանի (1941) և Արա Սարգսյանի կերտած կիսանդրիները, որոնցում արտայայտվել է, ինչպես ցույց արվեց ղեկուցման մեջ, մեծ զրոգի և հասարակական գործչի ներքին ուժն ու կարողությունը: Այնուհետև ղեկուցողը համառոտակի ներկայացրեց Արուսյանի հանրահայտ հուշարձանի ստեղծման պատմությունը: Ընդգծվեց, որ այդ հուշարձանը հայ բանդակագործների բազմամյա ստեղծագործական տրեանքի արգասիքն է: 1910 թ. հայտարարված մրցույթին մասնակցում են աշխարհի տարբեր երկրներից բազմաթիվ հայ արվեստագետներ: Լավագույն է ճանաչվում Անդրեաս Տեր-Մարությանի պատրաստած բրոնզե-ձուլվ արձանը, որ, ղեկուցողի հավաստմամբ «խոշոր ներդրում էր հայ բանդակագործության մեջ»: Ահա այս որոնումների ծնունդն է Ս. Լ. Ստեփանյանի կերտած վահանա-արձանը, որի բացումը տեղի է ունենում 1950 թ., նոյեմբերին և որն այսօր դարձել է Նրանի խորհրդանշաններից մեկը:

Մ. Գալոյանի ղեկուցումը ի մի է բերում և համակարգում այն բոլոր փաստական տվյալները, որոնք վկայում են հայ մշակույթի պատմության մեջ արուսյանական թեմաների և Արուսյանի կերպարի ստեղծագործական մարմնավորման մեկունակադարյա ընթացքը:

Բանասիրության դոկտոր Ա. Եղիազարյանի ղեկուցումը նվիրված էր Արուսյանի կերպարի մեկնարանությանը XX դարի հայ գրականության մեջ: Ըստ ղեկուցողի՝ ԼՍԵ հայ գրականության պատմական զարգացումը պատմությունը ավելի հաճախ ռոմանտիկական ոգեորության ազդեցությամբ էր կամ էլ ռոմանտիկական թախծի ու տխրության նյութ, ապա Առաջին համաշխարհային պատերազմից և Մեծ Եղեռնից հետո զայրագրականությունը խորձեց ընդհանուր-վերլուծական հայացքով նայել պատմությանը: Այդ համատեքստում էլ փորձ արվեց բացատրել, թե ինչու 1930-ական թթ. Արուսյանի կերպարը զրավեց մեր երկու մեծ գրողների՝ Բակունցի և Զարենցի ուղարկությունը: Զարենցի «Գեպի Լյառը Մասիս» պոեմը դիտարկվեց իրեն «Գիրք ճանապարհի» ղրքի օրգանական մաս: Դա խորապես հոգեբանական պոեմ է, ուր Սրուսյանի կերպարը կերտված է ռեալիստական ղեկագիտության սկզբունքներով, պատճառաբանված ու համոզիչ են հերոսի կասկածներն ու տարակուսները իր պատմական ու մշակութային առաքելության վերաբերյալ: Այնուհետև ղեկուցողը, որ Զարենցի պոեմում այդ կասկածները վերջիվերջ փառատվում են. Արուսյանն ընկալվում է իրեն լուսավոր կետ մեր պատմության անլույս ուղիներում: Ողբերգականության ու պատմական լավատեսության այդ միաձուլումը, — եզրակացրեց ղեկուցողը, — Արուսյանի կերպարը տեսք է հատկապես հոգեհարազատ դարձնել Զարենցին, որ 30-ական թվականներին ապրում էր նույն խորին կասկածները իր ուղու և արածի վերաբերյալ, և Արուսյանի ճակատագրի մեջ: Դառնեցր պետք է տեսնել իր ճակատագրի ուրվագիծը:

Խոսելով Բակունցի «Խաչատուր Արուսյան» անավարտ վեպի մասին՝ Ա. Եղիազարյանը Արուսյանի կերպարի մեկնարանությունը հարցում նրա և Զարենցի մոտ նկատեց ինչպես որոշակի ընդհանրություններ, այնպես էլ էական տարրերություններ: Եվ Զարենցի պոեմում, և Բակունցի վեպում մեծ լուսավորչի կերպարը, ողբերգականությամբ հանդերձ, իրոր լույսի շող է դարաշրջանի համատարած խավարի մեջ: Սակայն եթե Զարենցը Արուսյանի հավատն



ու շանքերը այնուամենայնիվ ապարդյուն չի համարում, ապա Ռակունցը հարցի մեկնակետը օգտագործում է՝ արտահայտելու համար իր ժխտողական վերաբերմունքը ինչպես ոուսական ցարիզմի, այնպես էլ հայկական միջավայրի հանդեպ, ուր ժողովուրդը ներկայացվում է միայն «իրրե տիրող կարգերի խեղճ ու անզոր զոհ»։ Դա ժամանակի տիրող մտայնությունն էր։ Րայց և այնպես՝ «Արուվյանը երկու դորժերում էլ ներկայանում է իրրե հայոց նոր պատմության ամենաոգրերդական զեմբերից մեկը, որի ճակատադիրը մեր երկու դրոշների համար ցուացնում է հայոց նոր պատմության ողբերդական հակասականությունը»։ Եվ ապա՝ «Արուվյանի կերպարի արծարծումով Չարենցն ու Ռակունցը նոր աստիճանի ին բարձրացնում հայոց պատմության բնությունն ու վերադնահատման այն պրոցեսը, որ սկսվել էր ցեղասպանությունից հետո»։ Իսկ ինչ վերաբերում է Ռակունցի վնային, ապա այն «փաստորեն առաջին պատմականագրական վեպն էր հայ գրականության մեջ»։ Նա սկիզբ էր դնում գրական մի նոր ժանրի, որը հետագայում մեծ տեղ գրավեց հայկական արձակույթում։

Ամփոփելով ղիտաժողովը՝ ակադեմիկոս էդ. Զրբաշյանը հիշեց նաև Հովհ. Բումանյանի խոսքը Արուվյանի մասին, թե՛ «նա ամենքինն է, և ամենքը նրա մեջ են»։ Իրոք, բոլոր պեկուցումները իրենց հետորքերի բովանդակությամբ մեկ անդամ ևս հաստատեցին մեծ գրողի այդ միտքը։

Բաճալիք. ղիտ. ղոկտուր Վ. Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ